

ԲԱԺԱՆՈՒ ԿՐԻՍՏՈՒԹԻՒՆ
 Պոլիտիկայի համար 12 Գ-
 Վեճակայ 6
 Արտասույն սկի հա-
 մար Տարեկան 15
 Վեճակայ 8
 Ստատիստիկայի համար
 Տարեկան 3 ԳՎ
 Վեճակայ 1.50
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրանացու սոցիալա-
 ջին երեսին համար 40ս.
 Կ. հսկ վերջին երեսին
 մար 20 սանթիմ կ. երեսին
 սեղի սեղաններու համար
 20 ՍՎ գեղը կրչոյս :

ՇԱՐՊԹ

Պոլիտիկայի համար
 Գ. Ա. Պոլիտիկայի համար
 Գ. Ա. Պոլիտիկայի համար
 Գ. Ա. Պոլիտիկայի համար
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

Պոլիտիկայի համար
 Գ. Ա. Պոլիտիկայի համար

Պոլիտիկայի համար
 Գ. Ա. Պոլիտիկայի համար

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՊԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐՊԹՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԿՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ամերիկայի երկու հայ թերթերը՝ «Հայրենիք» և «Չայն Հայրենեաց» կրկին սկսել են միութեան խնդրի առթիւ տաք, երբեմն կրքեր բորբոքող վիճաբանութիւններով զբաղվել։ Մեր կարծիքով երկու թերթերն էլ չափազանցութիւնների մէջ են մտնում և վստաստ են այն գործին, որի իրականացման շերտ փափագողներ են։ Սյուպեր-տով նրանք կրկին ասարեզ են բերում մեր այն տարրերը, որոնք յեղափոխական գործերով և մեր յեղափոխական տարրերի միացման խնդրով հետաքրքրվել են միայն ջուր պղտորելու և մեր հասարակական կեանքի մէջ ու եւ դեր խաղալու յաւակնութեան բաւարարութիւն տալու համար։ Այդպիսով, կրքեր բորբոքելու, ատելութիւնը հրահրելու բոլորովին պէտքը չը կայ։ Միութեան խնդրի առջեւ մեր յեղափոխութեանները կարող են կանգնել անհնարին սառնարիւնութեամբ, որովհետեւ այդ խնդիրը լուծելու յանձն են առել Դաշնակցութեան և Վեր. Հընչակեանների երկու կարեւոր մարմինները։ Քանի որ այդ մարմինները իրար հետ բանակցութիւնների մէջ են մտած, ուրեմն ի՞նչու նրանց վերջնական որոշումը գետ. մէջ տեղ չեկած, կրկին սկսել նոր և աւելորդ բարդութիւններ ստեղծել։ այդ բարդութիւնները վստասկար են միութեան խնդիրը թէ գրականապէս և թէ բացասականապէս լուծվելու պարագայում։

Ի՞նչ հարկ կայ գոգոզելու, իրար զուլս պատուելու։ Վեր. Հընչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը որոշ պայմաններով միութիւն է առաջարկում։ Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրօն զուրկ լինելով Հընչակեան այդ մարմնի ունեցած լիազօրութիւնից, բնական է որ անկարող է խնդրի պատասխանել

Հընչակեանների կեդր. վարչութեան, նա ամբողջ Դաշնակցութեան տրամագրութիւնները, պայմանները և որոշումները բնագույնից և լիազօրութիւն ստանալուց յետոյ միայն կարող է որոշ պատասխան տալ։

Մեր կարծիքով Վեր. Հընչակեանների կեդր. վարչութիւնը լաւ գիտնալով որ Արեւմտեան Բիւրօն կամ թէ ԴՐՕՇԱԿԻ խմբագրութիւնը անկարող էին «փութանակի» պատասխանել, պարտաւոր էր մի քիչ համբերող լինել և զոհողութիւններով համարված, յայտարարութիւններից խուսափել։ Նա պէտք է զգար որ գետ իրեն առաջարկած փափագելի միութիւնը չիրականացած, Դաշնակցութիւնը նոյն ապակեգրօն Դաշնակցութիւնն է և նրա ոչ մէկ բիւրօն կամ խումբագրութիւնը կարող էին թերանալ իրենց դէպի կազմակերպութիւնը ունեցած պարտականութիւնների մէջ և լիազօրաբար «այո» կամ «ոչ» պատասխանել։

Արեւմտեան Բիւրօն Դաշնակցութեան պատասխանը ուշացնում է ոչ թէ կամային կամ Դաշնակցութեան վարձանելու պատճառով այլ որովհետեւ ինքր գետ այդ արտօնութիւնը չէ ստացել Վերակազմախնդրի կեդրոնական վարչութիւնը իբր այլ կուսակցութեան լիազօր մարմին պէտք է հասկանար որ ինքը բանակցութեան է սկսել ոչ թէ Դաշնակցութեան հետ, այլ Դաշնակցութեան մի մարմնի, որը աւելի միջնորդի դեր կարող է կատարել քան լիազօրի, և լիազօր միջնորդ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ Դաշնակցութիւնը այդ լիազօրութիւնը տայ իր բիւրօնին։

Միթէ Արեւմտեան Բիւրօն մեղաւոր է՞ որ ինքը վերակազմախնդրի կեդր. վարչութեան բախտին չէ արժանացել և իրմով չի կարող ներկայացնել ամբողջ Դաշնակցութիւնը։

Ի՞նչ կարծում ենք որ այս ճշմարտութիւնները յայտնի են

Վերակազմ. կեդր. վարչութեան ուրեմն ինչո՞ւ նա մի շարք զոհողութիւնների դուրսից յայտարարութիւններով միայն ինքը զինքն է ուզում Վեր. միութեան կեդր. և հայրենիքի սիրոյն ամէն ունեցած շունեցածը զոհող ներկայացնել, ու կարծես, Դաշնակցութիւնը միութեան վերաբերմամբ նախապէս կասկածելի գիրքի մէջ գնել հայ ժողովրդի առջեւ։

Ահա «նոր կեանք»-ի այս ուղղութիւնն է պատճառ որ Ամերիկայի երկու թերթերը ժամանակաւոր հաշտութիւն վերցնելու և կատարի կոխը յայտարարելու նախաժամիր մէջ են գտնվում։

ՎՍՐԴՈ

ԳՍՂԳԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Սահմանադրական եւրոպայի մէջ սովորութիւն է, որ կառավարութիւնը ազգային ժողովներու կը ներկայացնեն ինչ որ կը խորհին իրեն լաւ և բարձր իրենց երկիրներու համար եւ ժողովներէ ընդունուել վերջը կը գործադրեն՝ կառավարութիւնը ազատ են սակայն իրենց պատասխանատուութեան ներքեւ այլ և այլ դործեր ալ ընելու, որոնց հաշիւը կը ներկայացնեն գործեալ ժողովներու ի պահանջն հարկին և բացատրութիւն կուտան և այս սովորաբար տեղի կուենան այս ամէն մէկ նախարարութեան տարեկան ելուճուաքի վիճարանութեան առթիւ։

Այդ ժամանակն է ահա, որ կառավարութեան և կուսակցութեանց բուն ոգին երեւան կելնէ ու կը յայտնուի, որ մինչեւ այն ատեն շատ տարբեր կերպերով կը մեկնուի ամէն կուսակցութիւնն ամէն ազգէ և անհատէ, և շատեր կը գործանան ու կիրք կը զգան թէ ի՞նչու չեն կրցած կառավարութեանց զաղանիքներու և նպատակներու խորը թափանցել ու խորուած են։ Այս կարգէն է վերջերս Գաղղիոյ եւ թուրքիոյ միջեւ տեղի ունեցած Գաղղի խնդիրը, որ ըստ երևույթին կրնար պատերազմի ալ յանգիլ թէ որ Սուլթանը Հալիս շրջաններ Գաղղիոյ պահանջները։

Ի՞նչեր չըսուեցան ու չը գրուեցան այդ առթիւ. շատ քաղաքագետներ մինչև իսկ կարծիք յայտնեցին, որ իբր թէ Գաղղիոյ եւ թուրքիոյ միջեւ զաղանի համաձայնութիւն մը կայ այդ առթիւ։ Սուլթանն Մակեդոնիոյ եւ Հայաստանի համար որոշ բարեկարգութիւններ պահանջելու համար։

Մեր արտասահմանի «փոյթիթիգոսներն» անգամ իրար անցած յոգուածներ տեղացուցին եւ կաւէտէին իսկ որ հային աղաաւթեան օր մտեցած է։

ՇԱՐՊԹՈՒՄ ԵՂԱՎ ԴՄԱՅԻՆ ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՀԱՅ ՄԱՍՈՒՄԻՆ ԱՆՋ, որ ըստ իւր սովորութեան պոստ և գոստ թէ սուս են ըստածներ եւ թէ չը պէտք է խորուիլ եւ արդարեւ երբ Գաղղիոյ պահանջները հրատարակուեցան, Գաղղիա որ այնչափ խնդիրները կարգադրեց, Գիտանիներու համար անգամ գոհացում ստացաւ, տեսնուեցա՞ւ եւ կարգացուեցա՞ւ որ եւ է պահանջը մը հային համար, երբեք, թէ ինչո՞ւ. ահաւասիկ։

Յունվար 20ին Գաղղիոյ երեսփոխանական ժողովին մէջ Սուլթէ երեսփոխանը հայոց ջարդին վերաբերմամբ հարցում մը ուղղեց կառավարութեան, արտաքին գործոց նախարարը, Տէլգասէ, Միտիլինէի խնդիրը ձեռք առնելով պատասխանեց թէ Գաղղիոյ ոչ միայն իւր հրպատակաց շահերն, այլ իւր բարոյական շահերն ալ պահպանելու ուղղեց այսինքն իւր ազդեցութիւն կախովի եւ ոչ կախովի ազգաց վրայ, բացատրեց այն պարտաւորութիւններ, զորս եւրոպայ Պերլինի վեհ ժողովին մէջ հայոց նկատմամբ ստանձնած է, թէ առանց բոլոր տէրութեանց համաձայնութեան չը կրնար բան մը ընել, այսուհանդերձ, ըսաւ. Գաղղիա քանի անգամ պոյիս ինչպատ հայոց գործած է, առանց շիկնելու առանց կարմրելու, Տէլգասէ կըսէ որ խնդիրը այս կամ այն ազգին համար միայն Սուլթանէն շնորհներ ըստանալու վրայ չէ, այլ բոլոր ազգերու համար արգարութիւն և ապաւովութիւն ձեռք ձգելու վրայ է եւ թէ այս արդիւնքն ալ ձեռք բերուի, քաղաքականութեան և մարդկութեան հետ լաւ գործ մը ըրած պիտի ըլլան եւ թէ ոչ ոք կրնայ ըսել եզեր, որ Գաղղիա այս նպատակին համար չաշխատիք, ժողովն ալ 235ի դէմ 280 ձայնով կը հատնի նախարարին ստամ բացատրութեանց այսինքն անոր րոնած ընթացքին և հետեւիլիք ուղղութեան։

Քսան և Կինդ տարիներ յառաջ

Պէրլինի վեհաժողովին մէջ Գաղղիան ալ միւս տէրութեանց հետ ստորագրեց ճարգ. յօդուածը որ թիշ թէ շատ բարեկարգութիւն կը խօստանայ. եւ տակաւին քանի տարիներ յառաջ ալ Անգղիոյ եւ Ռուսիոյ հետ Հայաստանի բարեկարգութեանց ծրարքը մը ստորագրեց. սե հիւս ալ եւեր կըրէ թէ այս կամ այն ազգին համար չէ միայն խնդիրը. այլ բնոյճանութիւն ինչ կը նշանակէ այս :

Շատ շատ երկար պիտի ըլլայ եթէ Գաղղիոյ կառավարութեան ընթացքը քննադատենք. որ ըստ ինքեան բոլորովին հակասական է. հակամարդկային եւ մեր ազգային շահուէց. «տապան տապան» հակասակ միայն իսրայիլէնք օտարէն. բաւական չեն այդ մարդասէր կառավարութիւններէն մեր լաճները ու տեսանքը զմեզ համոզելու համար. որ օտարէն չկայ յոյս. օտարը միշտ օտար է. նախ միայն իրենք կը խօսին :

Ահա Գաղղիան ալ պարզապէս կուրանայ Հայաստանը եւ անոր ցաւակից չզտուիր ու անոնց ամենալու ընդհանուր բարեկարգութեան խընդիրը կը յօգէ. որ մեզ հոյոցս համար ուրիշ բան չէ. բայց եթէ վնաս մտնուի Սակայն հայ յեղափոխականը պիտի վճարի :

Երբէք ընդհակառակն աւելի պիտի պիտի գտնուինք եւ չի պիտի շեղի իւր ուղիէն. որ միայն պիտի առաջնորդէ ազատութեան յամօթ եւ ինաստանինս եւ Գաղղիոյ. այլ փառք հայ յեղափոխական ողիին :

ՊԱՐՍՎԱՍՏԱՆԵՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պր. Վահան Մանուէլեանի պարսկական սահմանի Գաղ. . . էն գրած 28 հոկտ. 1901 թուակիր նամակի մէջ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ. զորս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՍ II
III

Գիշերը վրայ հասաւ. ու հրաշալի լուսնկայ գիշեր :

Վահէն կրկին Ղազարապատի տանիքի վրայ է եւ դիտում է Ներսէսի լինը. նրա շուրջը խռնված բազմութիւնը եւ լուսինը որ Մասիսի կատարը քերելով լողում է դէպի Պինկէօլ (Բիւրակնեան) լեռները :

Լճի ափին, ծառերի սակ ժողովուրդը խուճը խուճը աեղաւորված, երգում, պարում եւ զարմանում է : Մի տեղ աղբալարացիներն են կտր պար բռնել եւ երգում են «չեմ չեմ չեմ կրնայ խաղայ, մաս բարուճս կը ճռնայ», ու սորօր տալիս : Ախալքալարի հալուհին, իր մարդարիտ գիւղիները, ոսկեպատ գլուխը լուսնի ճառագայթ-

ձեզ իմացնել աւելորդ չեմ համարիր :

ՊՍՎԱՍՏԱՆ Հասնելով և սեղւոյն գործերուն հետ ծանօթանալով, հասկցայ որ մեր մէջ որքան հըրեշտային է անպատկառ շարախօսութիւնը և զրայարտութիւնը. (Պարսկաստանի զաշնակցականներու մասին տարածուած անհեթեթ տարածայնութիւնները կ'ակնարկէ) : Մեր մի քանի տըղաքներն Սալմաստի մէջ վրկիշ հրեշտակներ եղած են և որոնց հովանաւորութեան տակ Սալմաստցին հանգրիտ ապրած է :

Իրաւ է թէ անցեալին մէջ մեր իններէն ոմանք այսպէս իր գործե կատարած են, բայց գործողները պատժուած, զարնուած և կամ վնասուած են. և եթէ մէջ քանի մը տեղեր ճնշուցներ բանեցողներ եղած են և կամ պախարակելի գործեր կատարած՝ տոսնք ալ քանի մը ինքնակոչ արմենականներ և հին հնչակեաններ են : Մեր կազմակերպութիւնը միշտ կը հսկէ իր անդամներուն վրայ, թող չը տար որ անոնք զեղծումներ կատարեն և յանդգնողներն խիստ կեցպով կը պատժէ, իսկ միւսները պաշտօնը պէտքով «գլուխը օտար անորոյ» բաներ են, ո՛չ նա. յող կայ ոչ քննող, ոչ որմնիչներն ոչ մի իրական կազմակերպութիւն չունին : Յեղափոխական անուն ունին վրանին բայց ոչ մէկ յեղափոխական գործ տեսած ունին, բացի յեղափոխական անունը շահագործելէ. բարեբախտաբար ասոնք ալ բոլորովին անհետանալու վրայ են, և ժողովրդի լուրջ, հասկացող և ուղղամիտ մասին հաւատքը մեր իններուն վրայ է : Մեր ինները թէ կը յարգեն և թէ կաշխատին Սալմաստի

ների տակ շողացնել տալով հրապուրիչ կերպարանք ստացած կարապի պէս լող է տալիս, պարած միջոցին :

Միւս կողմում Սալմաստցի կիները երգում են.

«Առաստուռն բարի լուսուն, ես կարօտ եմ քու տեսուն, ես դու զիրար թող սիրենք, մեզքը տէրտէրի վզուն» երբող կողմից, գրեթէ ծայրից լիքում է խորիստ «Բամբ որտան» ու թնդացնում լճի ամբողջ շրջակայքը, և ողբերում նրանց, ովքեր ազգայնութեան գաղափարը արդէն իւրացրել և հասկանում են :

Վահէն էլ չը կարողացաւ կտուրի վրայ մնալ. նա իջաւ ցած, և գնաց դէպի լինը : Ափովը հազիւ մի քանի քայլ էր արել, երբ լսեց մի հրաշալի ձայն. նա գլուխը դարձրեց դէպի ձայնի կողմը և նկատեց մի երիտասարդ, որը լճի եզերքին նստած, զլուխը բաց, փայլեամ մազերը քամուն տալով սչիքերը լուսնի շողերի հետ գրկելով փոքրիկ ալիքներով մէջ խրած՝ երգում էր թախծով և հրաշալի ձայնով

«Ձայն տուր ո՛վ ծովակ, ինչու լուսն ես, «Ողբակից լինել չը կամիս դժբաղդիս,

հայերուն զարգացմանը և բարորութեանը համար :

Գժբախտաբար վերջերս պատահած մի ցաւալի գէպը մեր իններուն վարկը քիչ մը նսեմացուց : Մեր սոցոց 4—5 հատը կը բնակէին Մահլաւ գիւղի մէջ, որ իր գիրքով Սալմաստի ամենէն վաճառքաւոր սեղն է. Սոմալի քրդաբնակ սարերու չանջ քին տակ, նշ նաւոր Ղարաուլի գիւմաց : Գիրտերը, որոնք ամբողջ ամառը շրջակայ թիւրք գիւղերը կողոպտեցին, ոչ մէկ վրաս չը հասցուցին հայերու մեր քէղայիներէն վախնալով, նոյն իսկ եկան և բարեկամացան հետերին : Բայց քուրդի բարեկամութիւնը կեղծաւոր է. ան կարծէ որ պէտք է խայթէ երբ միջոց գտնէ : 20—25 օրի չափ առաջ մեր սոցոքը բոլորովին ապահով որ քիւրդերէն գիւղին վրաս չը հասնիր զանազան գործերով գիւղէն կը հեռանան, նոյն այդ օրը չորս քիւրդեր գիւղը կը մտնեն և կուզեն աղայոց հետ տեսնուիլ. երբ կիմանան որ գիւղը չեն, դուրս կեննեն և կանուխէն սարերու վրայ գազանի դիրքեր գրաւած իրենց ընկերներուն նշան կուտան թէ գիւղը մարդ չկայ և անվախ կը յարձակին գիւղին հօտին վրայ և կը քշեն կը տանին :

Այն ատեն կը հասնին տղաքը, երբ որ արդէն քիւրդերը իրենց աւարով հեռացած կըլլան և մտնելու իջած կըլլայ, Յաջորդ օրը մեր տղաքը անօրինակ համարձակութեամբ կը մտնեն քիւրտերու գիւղերը և կը սպառնան անոնց պէս «ձափար» աղայի, եթէ նախիրը ետ չը վերադարձնէ . . . սակայն ձափար աղան կըսէ թէ ինք և իր մարդիկը այդ կողոպտուին մասնակցութիւն

«Միթէ միշտ այսպէս պիտ մնայ Հայաստան «Փշալից անապատ, երբեմն բուրաստան»

Վահէն քայլերը ուղղեց դէպի երգիչը—ամէն կողմից սկսեցին գէպի երգիչի կողմը հաւաքվել, իսկ երգիչը—առանց աչք դարձնելու ստացողներին, շարունակում էր իր սեւամախճոտ տխուր ազգային ողբը :

Երբ երգը վերջացաւ, եղբորակաչած ժողովուրդը—որ արդէն պարերը թողած, յարած ուշադրութեամբ լսում էր ողբացող երգչին, բուն ծափահարութիւններով վարձատրեց նրան Վահէն էլ դիմանալ չը կարողացաւ, նա ուզեց հեռանալ իր կանգնած տեղից, երբ թեւ մէկը բռնեց :

— Բար երեկոյ Վահէ—ինչ հրաշալի կերպով երգեց, եկ այս կողմով անցնենք. մերոնք չը տեսնեն. մինչև նրանք իրենց տեղը վերադառնան, մենք կարող ենք մի կէս ժամի չափ իրար հետ խօսիլ :

— Այո, Ձարուհի, հրաշալի երգեց. այնքան հրաշալի որ ինձ թւոյց թէ իսկապէս Վահայ լճի ափին եմ գտնվում երանի նրան որ իր ժողովրդի մէջ է

չունին և գործը կը ձգէ աւելի հեռու բնակողներու վրայ և արդաքը ձեռունոյն կը վերստանան :

Ահա այդ գէպը է որ մեր իններուն վարկը քիչ մը կորուցեց, թէև ասոնք մեղաւոր չեն քանի որ գիւղէն բացակայ էին. բայց ինչ արած. մեր ինները պիտի աշխատին անշուշտ վրէժ լուծել բայց ցաւալին հոն է որ հայ քիւրդացին համակերպած է իր բաղդին և չուզեր մասնակցիլ, վախնալով որ ուրիշ գէշ հետեւեալներ կ'ունենայ :

Շատ կը փափաքիմ իման ոյ թէ ամառը, ձեր բացակայութեան միջոցին Մանուէլեանի վերջին անգամ Օտէսայէն բերիչ Աթաբէկեանցի հասցեով «Նարմուտի» զրկած թղթակցութիւնը ինչու չէ հրատարակուած : (1)

Կ. ՊԻՆՆԵՆ
Ֆիլիպէ 2 յունվար

ՎԵՐՁԻՆ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարւայ վերջին յոյս տեսքն երկու հատ նոր գիրքերը վեկ հատ հանգէս մը. Հանգէսը վեհապետի Մխիթարեաններուն հրատարակած պատկերազարդ Գեղունին է որ զարդարուած է մեր քանի մը գործիչներու պատկերներով, անոնց կենսագրական տեղեկութիւններով միասին : Գեղունին հիմակ գրեթէ միակ հայ գեղեցիկ հանդէսն է որ յոյս կը տեսնայ. եթէ յարգելի խմբա-

(1) Տ.— Ձը հրատարակուելու միակ պատճառը այն է որ այդ նամակը չէ ստացված :

ԽՄԲ.

այրում. սեւ, այս սրբերի համար կատարված տօները և համախմբումները անողին նշանակութիւն ունին : Հիմա արդէն ամբողջ սրբին մտացել է. նա երգում է, պարում է, պարաճանում է. նա այստեղ զգում է որ ինքը մի ժողովուրդէ. իր առանձին ուրախութիւններով, վրտբով ու հանրային ձգտումներով :

«Ձայն տուր ով ծովակ» եթէ մի եւրոպական հռչակ սենեցող երգիչ երգէ չըբզ պահի մէջ, ինձ վրայ այն ազդեցութիւնը չը պէտք է գործէր, որչափ հիմա, Արարատի ստորոտում, այս լճի ափին. հայ ժողովրդի մէջ : Գուցէ իբր գեղարուեստական ստեղծագործութիւն ազդէր ինձ վրայ, սակայն ես այնտեղ այն ուժեղ թափով չը պէտք է զգայի որ ես հայ եմ, այն դժբախտ երկրի զաւակը, որի վիճակի վրայ ողբում է հայ բանաստեղծը, որի ապագայի մասին տանջող հարցեր է ապիս հայ հայրենասէրը :

— Այո, Վահէ, ինձ էլ թւում է. որ ժողովրդին սիրելու, նրան դարման տանելու համար, անհրաժեշտ է ժողովրդի մէջ, ժողովրդի հետ ապրել և զլալ այն, ինչ որ ժողովրդը ունի և ինչ որ չունի : (Շարունակելի)

գրութիւնը աշխատի անոր բովանդակութիւնը աւելի հարուստ և բազմակողմանի դարձնել, այն ժամանակ Գեղուեին աւելի լաւ պիտի կրնար ծառայել իւր նպատակին:

Ջր գիտենք թէ սյժմ Գեղուեին որչափ տարածուած է, սակայն կը փափաքենք որ ան մէջ մի հայ տան մէջ մտաւ գտնայ, մանաւանդ որ եկամտաւոր մէկ մասը որբերուն յատկացուած է:

Գրքուրուն մէջ կարեւոր տեղը կը բռնէ Պ. Աղամ Եարճանեանի «Գիւցազնորէնը», արձակ բանաստեղծութիւններ, աղէկ, կորովի մտքերով, սակայն գծուար հասկանալի թէեւ հարուստ ոճով մը:

Գիրքը երկասարգութեան համար է, բայց ցանկալի է ս. Պ. Եարճանեան այնպէս գրէր որ մեր ժողովրդին ալ հասկնար, աւելի օգտակար գիրքը ան է, որ լի զուր գիտութեամբ կը հասկնայ ի Մեզ կը թուի թէ Պ. Եարճանեան արձակի մէջ աւելի պիտի յաջողի և իր կարգի մտքերը ու տրամադրութիւնները աւելի մատչելի պիտի ըլլան ոչ միայն երկասարգներուն, այլ և ժողովրդի հասուն, ճշմարտ գրագէտ դասակարգին:

Ինչպէս ճանաչու առնենաչառ պէտքը ունի ոչ միայն մեր երկասարգութիւնը այլ և մեր ամբողջ ժողովուրդը, մանաւանդ հիմա, երբ ամէն կողմէ անոր ձեռքը կը տրուի մեղկացնող, թրմրեցնող հրատարակութիւններ, կը փափաքինք որ Պ. Եարճանեան ամենուն հասկանալի ոճով մը շարադրէ իր գրաւածքները:

Երկրորդ Պ. Չգոնի բանաստեղծութիւնները հրատարակուած Վառնայի մէջ, Չգոնի այս երկրորդ հրատարակութեան մէջ աւելի բանաստեղծութիւններ կան քան թէ առաջինին մէջ, սակայն կը կարծենք որ Պ. Չգոն ալ լուրջ կը լինէ եթէ զինքը արձակին նուիրէ:

Մտերու ստացանք նաև պրզատիկ պոէզիա մը, որ մեղադրէ բնորուն հեղինակը, Արսէն, Անահիտի գրաչարը, կը մեղադրէ բոլոր այն անձերը որոնք Չգոնեանը մտնելու և անոր պատկերները շատ ծանր են, և մեզի շատ գէշ կը ներկայացնեն Փարիզաբնակ քանի մը ազգայիններ: Թէեւ պոէզիա չափազանց անցուցարձակ կը վերաբերի, սակայն նշանակութիւն պիտի ունենայ եթէ ճշգրտութիւն Պ. Արսէնի մեղադրանքները:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆԿ

Ֆրանք

Տեարք. Սարգիս Գուրումեան 40
Բարեկ Սիւրբաբեան 20 Յակոբ Մազեան 20 Ա. Գուրումեան 20 Ա. Յ. Սթանպուրեան 20 Արշակ Փաշալեան 20 Յ. Ս. Թոսայրբեան 20 Գ. Վարդանեան 20 Կիւրապետեան, Տաճարեան 60 Մ. Մ. Փափազեան 30 Կ. Կ. Փափազեան և ընկ. 30 Յ. Կ. Զանկիւլեան 2 Գալուստ Սահաթեան 80 Ոմն 1 Յակոբ Գ. Գասպարեան 1 Մաքսուտ Տէմիրճեան 1 Պաղ Մուրաբեան 4 Յովհաննէսեան 10 Մաքսուտ Աճէմեան 1 Ա. Կ. Տէմիրճեան 15 Ա. Էջիկեան 1 Մանուկ Նաոյեան 5 Յ. Տէր Խաչերեան 2 Պետրոս Վրդանէսեան 1 Ա. Ուղուն Պողոսեան 10 Գ. Սրէնիկեան 3 Գ. Էջիկեան 5 Պողոս Սարգիսեան 2 Ա. Մամուկեան 2 Յ. Նալբանդեան 1 Յովհաննէս Նազարեան 2 Միքայէլ Գապատայեան 4 Աննաքերիմ Ժամկոչեան 1 Գառնիկ Տէմիրճեան 1 Կ. Եղմանեան 5 Պողոս Սրապեան 2 Սիւքիասեան 1 Կէօնճեան 2 Թազուր Մարկոսեան 2 Ա. Կիւմրիւլեան 5 Աթանասաքի 1 Ա. Ծալիկիւլեան 1 Յար. Ապաճեան 3 Մ. Սարգիսեան 4 Պ. Թաթևուեան 2 Երուանդ Յակոբեան 4 Արքայազն Պաշա 1 Աննիմ Տիգրղեան 1 Զամեան 5 Պ. Ամիրեան 2 Ոսկեան Թաշճեան 4 Գ. Տանապաշեան 2 Մ. Սրապեան 4 Մարտիկ Խաչարեան 3 Ոմն 1 Անգիկ Զարմանեան 4 Վարդան Խաչիկեան 1 Կ. Կարասէֆերեան 4 Մարկոս Յ. Պողոսեան 5 Յարութիւն Սարախանեան 5 Յովակիմ Սարափեան 1 Մ. Թէրզեան 4 Էջմատիոս Պարոնեան 2 Մ. Կ. Թալամեան 4 Գլխադանեան եղբարք 3 Յովհաննէս Կարսեան 4 Յար. Գլխադան 4 Պողոս Գալեմեան 1 Փիլիպպոս Հալաճեան 2 Արամ Պէրպերեան 1 Սարգիս Սանակեան 1 Յ Արալանճեան 1 Բարսեղ Ալաճաճեան 1 Յար. Անտոնեան 0. 50 Յովհ. Ապարեան 0. 50 Սիւմն Մէրկէրեան 1 Համբ. Պասմաճեան 1 Մ. Թալուքեան 1 Միսակ Թալուքեան 0. 50 Յ. Խաչիկեան 1. 50 Երկրորդ Պէլլիկեան 2 Ուղունպողոսեան Մէսրոբեան 1 Կար. Քէշիկեան 1 Կար. Էթիկեան 0. 50 Մար. Յովհաննէսեան 1

Տ. Փանոս Կարապետեան 50 սնթ. Գրիգոր Ազամեան 4 ֆր. Եղբարք Աճէմեան 3 Ս. Մարտիկեան 10, Կ. Արսէն Էստիպալեան 10, Կ. Ս. Թոփազազեան 3, Գանիէլ Ս. Մալախեան 1, Դուկաս Գասապեան 2, Ալիքսան Գուրումեան 1, Դերձակ Միքայէլ 2, Նաուս Էֆէնի 1, Յ. Քիչքեկեան 4, Յ. Փիլիպպոսեան 50 սնթ. Բողաղաղի Սէնէթերիմ 50 սնթ. Յակոբ Շահպազեան 1, Յ. Կ. Շիրինեան 1, Քոստան 2, Է. Միքայէլեան 5, Բէթէոս Մէրկէրեան 2, Գրիգոր Կիւրապետեան 4, Ոմն 40 սնթ. Յ. Էնկիպարեան 2, Մանուկ Շահինեան 4, Պ. Փափազեան 2, Ս. Մարտիկեան 2, Ս. Գարբրիէլեան 15 ֆր. Յակոբ Աղամեան 5, Օ. Յակոբեան 2, Բարսեղ Կոտիլեան 40 սնթ. Գրիգոր Սարգիսեան 2 ֆր. Մ. Բարսեղեան 4, Հաճի Ա. Սիսակեան 50 սնթ. Տօթթ. Վարդանեան 4, Յ. Գուրապետեան 3, Հաճուեան եղբարք 5, Թորոս Փղատեան 4, Միհրան Սեղրակեան 2, Ա. Զարհանէլեան 1. 20 սնթ. Յ. Մ. Թովմատեան 5, Ա. Յ. Արէլ 4, Ո. Կարմիրեան 2,

Ռուբէն Հէքիմեան 4 Ա. Ստամպուլուեան 5, Յ. Գուրումեան 5, Գեղամ Տէր Յարութիւնեան 5, Յ. Գարամանեան 4, Արքայազն Ամիրեան 1, Ռ. Գարապաճազեան 4, Ա. Ամիրխանեան 5, Վարդո 5, Յ. Ս. Փափազեան 10 ֆր. Հայրապետ Պ. Սարգիսեան 5, Ոմն 40 ֆր. Եւագրի 1, Ա. Աստատուրեան 2, Մատթիէայ Սուքեանեան 1, Օ Բարսեղեան 4, Ա. Շաքարեան 1, Ոմն 50 սնթ. Հաճի Յակոբ 50 սնթ. Սիմոն Աւագեան 50ս. Արքայազն Միսաէրեան 62, 30 սնթ Պ. Ճիլէրճեան 3, Յակոբ Սէֆերեան 1, Երկրորդ Գիւրապետ 2, Ա. Բէլիկեան Պաշալեան 5, Շիրմանեան 4, Գուրմար 555, 30

ԸՆԴ. ՀԱՇՅԻ

Ղրկուած դեկտ. 17ին Կարնոյ կարտի յանձնաժողովին 28 օսմ. ոսկի 22, 90 Էն 641, 20
Պատրաստ կար ֆր. 180 515, 95 ԼՂ կընէ 22, 97 1/2 Էն 461, 20 641, 20
Գուրմար ԼՂ ֆր. 555, 30
Չեղ ԼՂ ֆր. 545, 95
Կը Մնայ ԼՂ 39, 35
Պատրաստ դրամ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—(0)—

Շնորհակալութիւն այն ազնիւ ազգայինոց, որք հաճեցան իրենց սրտաբուխ նուէրներովը օգնութեան փութալ աղետալի գետնաշարժէն հալածուած ու թըշուառացած կարինի մեր դժբախտ հայրենակիցներուն, որոնք կատարի ձմեռան մը սառնամանիքին տակ կը շարժարուին դեռ վրաններու կամ փրատակներու ներքեւ անխնայ քաղուելով համաճարակ հիւանդութեան մը մահուան սեւ գերանդիւն:

Արդարեւ մեծ պարտականութիւն մը կը ծանրանար ըստինքեան Վառնայի հայրութեան սրտին ալ, և ուրախ կը զգանք յայտարարել թէ նա իր պարտածանաչութիւնը ցոյց տուաւ բնութեան ահաւելի հարուածէն ալ փասուած իր հայրենակիցներուն հանդէպ:

Արդիւնքը այս հանգանակութեան զոր ձեռնարկեցիք քանի մը ազգասէր ու պարտաճանաչ անձերէ օժտուած՝ կը հասնի այսօր 180 ոսկի ֆրանքի և 555, 30 ԼՂի: Ու արդէն իսկ ներկայ ամսոյ 17ին 28 օսմ, ոսկի զրկուեցաւ Կարնոյ կարտի յանձնաժողովին, և հրատարակուած հաշույն համաձայն այժմ կը մնայ պատրաստ դրամ 39, 35 ԼՂ ոքն որ պիտի շրկենք հոն, եւ հանգանակութիւնը դադարի:

Փափագելի է որ, այն ազգայիններն ալ որոնց գիմուած չէ անձանթութեան պատճառաւ, մեզ փութացնեն իրենց նուէրը՝ ի նպաստ կարնոյ արկածելոց: Մնամ յարգանք Գուրուստ Սահաթեան Դեկտ. 28 Վառնա

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—0—

Ներկայիւ իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ հետեւեալ ազգասէր անձանց, որոնք ի նպաստ սեղուոյ վարժարանի պարտոց բարձմանը ձեռնարկուած հանգանակութեան իրենց աջակցութիւնը նուիրեցին:

Ի Պուրթէշ. — Տեարք. Գրիգ. Նաթաշեան, Յ. Փափազեան, Ղ. Ալմէրեան և Գէ. Վասպուրականցի
Ի Սուլիւա. — Ա. Մարգարեան Ղ. Շաքարեան, Կ. Ժամակոչեան Վ. Մարտիրոսեան, Կ. Օրֆէրեան Մ. Յակոբեան Յ. Խուրջուա, Կ. Եղիազարեան, Գ. Շահինեան, Յ. Յարութիւնեան, Գ. Գալուստեան, Մ. Կոստանեան և Մ. Միսիթարեան:

Ի Պապատաղ. — Մ. Գասպեան Ա. Աւետիքեան և Պ. Մելիքոսեան
Ի Թուրշա. — Տեարք Երևուս և Գալուստ:

Ի Պրայիլա. — Յակոբ Չափուշ. Հայրապետ Ղապարեան, Մ. Ասոյեան, Կ. Յովհաննէսեան, Խ. Գէորգեան, Մելիք Չափուշ, Մովսէս աղա, և Ղ. Թոփիկեան:

Ի Թէքուշ. — Ս. Ալթունեան Ս. Գըլըճեան և Թ. Հայպաթեան
Պալատ. — Մ. Ասատուրեան
Ի Ֆոքշան. — Մ. Սեթեան:

Ի Կալաց. — Խ. Թրանխուլեան, Մ. Մանուկեան և Ղ. Պողոսեան:
Ի Ռոման. — Մ. Տէր Պողոսեան
Ի Եաշ. — Յակոբ Յարութիւնեան

Ի Պոթուշան. — Գրիգոր Թաշճեան
Ի Սուչոփա. — Գ. Կոյնեան և Թ. Բամաշքանեան:

Ի Պաքով. — Տ. Գր. քահանայ
Ի Բանչո. — Գ. Միսիրցեանց:
Հրապարակաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ նաև վերոյիշեալ քաղաքները բնակող սիրելի ազգայինոց, որք սիրալոյս ժար մասնակցեցան հանգանակութեան և նուիրեցին իրենց լուսմաները ի սէր Ազգ. մանկուոյ դաստիարակութեան:

Տէր Յիսուս՝ որ այրոյն լուսման օրհնութեամբ ընդունեց և բաժակ մը ցուրտ ջուրին անկորուստ վարձք խօստացաւ, ընդունի ի բարին բոլոր բարեպաշտ սիրելեացդ նուէրները և իւր օրհնութիւններով պահպանէ զամենեանդ:

Աղօթարար

Սարգիս քահանայ Ղարկեան

Վառնա 31 դեկտ.

ՎԱՌՆԱՅԻ ՈՐԲԱՆՆԱՄԻՆ

Ձեր յայտարարութիւնը միւս հա- մարի մէջ կը սպագրուի :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ լրագրորդները բոլոր խմբագրու- ներից խնդրում է իրենց թերթերից մի մի օրինակ զրկել հետեւեւս հաս- ցէով :

Կ. Արապեանց ձեռագրի (Մէր Րուս). բաժանորդագրինը կուզարկուի հէնց որ ստաջին համարները ստացին :

Կ. Արաբեանց :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պրայիլիայի ազգայինները կարենոյ արկածելոց համար 200 ֆրանք հանգանակած և պատրի- արքի զրկած են :

Պոլսոյ հայ բողոքականները 120 ոսկի հանգանակած են կար- նոյ արկածելոց համար և զրկած :

Կիլիկիոյ նորընտիր կաթո- ղիկոսը իրեն անձնական քար- սուղար ընտրեր է ներսէս Վ. Դանիէլեանը զոր մագիր է իւր հետը տանիլ Կիլիկիա, ինչպէս նաև Պոլիս գտնուող բոլոր Սա- կոն միաբանները :

Պոլսոյ թերթերը կը հա- ղորդեն որ Մանչէսթրի հայերը իրենց հովիւ Թորոս քահանայ Զուղայեցիին պաշտօնէն հրաժա- րեցուցեր են :

Հուշակատր դերասան Ա- դամեանի կովկասի մէջ ստացած ցած նուէրներէն արժանաւոր պը- սակ մը բաժակ մը, ձխախտի աման մը 1000 ռուպլի արժողու- թեամբ կը գտնուին եղեր նոր նախիջեւանի մէկ զրամատան մէջ, որովհետեւ մինչև հիմա անէր մը չէ ներկայացած : Հիմա մտադրութիւն կը յայտնուի այդ իրեղէնները յանձնել իջմիածնայ թանգարանին :

Մոսկուայի հայկական երե- կոյթը տեղի ունեցեր է սղնուա- կաններուն սրահին մէջ : Երե- կոյթը շատ բազմամարդ և շքեղ եղած է չքաւոր հայ ուսանողնե- րուն ինպատ 2000 ռուպլի զուտ հատոյթ մնացեր է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոլսէն կը հաղորդեն որ Մուշ գաւառի նորչէն գիւղին մօտերը հայ հրոսախմբի մը և ժանտար-

նէրու վաշտի մը միջև ընդհա- րում տեղի ունեցեր է : Ժան- տարմներու սպայ շիւսէին ազան և չորս ձիեր սպանուեր են, իսկ մէկ յինուպետ և ժանտարմ մը վիրաւորուեր են :

Հայ հրոսախումբը յաջողեր է խուսափիլ : Կը հաղորդեն նաև թէ Գիհեան գիւղի քոզերն ալ ուրիշ հայ հրոսախումբ մը երեւ- ցեր է բայց այդ խմբին ետեւը գացող վաշտը զայն գտած չէ :

Մէլհամէ չի պիտի վերա- դառնայ Սօֆիա :

Սայիտ փաշան Սուլթանին թարապուլ զի խնդրին առթիւ եր- կար տեղեկագիր մը ներկայա- ցուցեր է, որուն բովանդակու- թեան միւս նախարարներն ան- գամ ծանօթ չեն : Կը հաւատե- ցնեն թէ Սայիտ փաշան կառա- ջարկէ տեսակ մը ինքնավարու- թիւն տալ այդ նահանգին :

Սելանիք յոյներու ժողովա- րանը կառավարութիւնը գոցեր է հրէաներու կողմէն եղած մատ- նութեան մը հիման վրայ :

Դեսպանները մտադիր են հուաքական նօթա մը տալ Բ. Դրան կարմիր ծովուն մէջ Երեւ- ցած թուրք ծովահէններուն հա- մար որոնք նաւակներով կը շրջին աւազակութեան համար : Նաւակ- ներէն մէկ քանիին վրայ թնթա- նօթներ ալ կան : Թուրք իշխա- նութիւններն ալ կողմն են այդ ծովահէններուն :

Տամատ Մահմուտ փաշան մահուան դատապարտուեր է :

Սուլթանը արտօներ է գեր- մանական ընկերութեան Բաղ- դատի երկաթուղուն գիծը շինելը :

Թուրք կառավարութիւնը 350,000 ոսկի լոնձներ է Պանք Օթոմանի Ռոսի պարտքը վճա- րելու համար : Մնացած 40,000 ոսկին ալ շուտով պիտի վճարէ :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

«Սղանտարտարի Պրիւսէիլի թղ- թակիցը կը հաղորդէ որ Հարա- ւային Ափրիկէյէ ստացուած տե- ղեկագրի մը համաձայն պօէրնե- րը ունին 60000 հրացան, մեծ քանակութեամբ ուստտի պաշար և պատերազմական մթերք, ո- րոնք շատ ապահով տեղ մը պահուած են :

Նոյն թերթը կը հաղորդէ որ հակառակ կառավարութեան և Քրիկէրի խորհրդականներու կողմէն եղած հերքումներու Ան- գլիոյ և Պօէրներու միջև հաշ- տութեան համար բանակցու- թիւններ տեղի կուենան :

Թայմը կը հաղորդէ թէ վհատութիւնը կը տիրէ պօէր- րերու մէջ որովհետեւ Պօթաի ուղղուած աղերսագիր մը գտնու- ած որով կը խնդրուի պատե-

րագրին վերջ տալ : ստորագրող- ներուն մէջ կան և քանի մը ծա- նօթ սնուններ :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Սօֆիայի մէջ պաշտօնական գրութեանց կեղծ գրոջմաթուղ- թեր բռնուէր են : Շատ մարդիկ կը կասկածուին, ձերբակալուեր է նաև Սփէլ լրագրի խմբագիր Գիկօ Իովէֆ որ բանտարկութեան առաջին օրը ուստիկանութեան մէջ ինքզինքը թունաւորուեր է : Գրոջմաթուղթերը կը շինեն եղեր զինարարի մէջ Գարիպօ- ներ որոնք արդէն ձերբակալ- ուած են :

Ի Տ Ա Լ Ի Ա Ե Ի Զ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Կըսուի թէ Իտալիոյ և Զուի- ցերիոյ մէջ գաղտնի համաձայ- նութիւն մը կայացած է Պրան- սայի արգիլելու Իտալիա արշա- ւելու :

ԳՈՐԾԱՐԱՆ
Լաթ ներկելու և քիմիա- պէս մաքրելու :
Վ. Ք Թ Օ Յ Ի Լ Օ Յ
ԵՒ
ԻՎ. Մ. Ի Օ Բ Օ Յ
ՐՈՍՏՈՒՔ
Սոյն գործարանի մասնաճիւղը որուն կառավարիչն է Ռէթօր ԵՂՈՒՇԻՔՕՅ «Իզվէստիկի» խմ- բագիրը, քաղաքային պարտե- զին դիմացը :
Կը ներկէ կոնանց և մանկա- կատ զգեստներ : մետաքօէ, բրդէ և բամպակէ գործուած ք- ներ, նոյնպէն վաճառականական սպրանքներ ու մանուած քներ :
Ներկը չի թափեր, միայն ներկելու տալիք նիւթերը մա- ջած չ' պիտի ըլլան :
Գիները չափաւոր են :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայդերբերգում հիմնել է մի գրա- դարան, որ նպատակ է գրել ծանօթա- ցնել արտասահմանի հայ ուսանող- ղութեան և ընդհանրապէս հետաքը- քրուող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերելու հայերէն և օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ : Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համետ թիւ որի համար յայտնում ենք նուիրա- տու անձանց մեր խորին շնորհակա- լութիւնը և խնդրում ենք այն անձանց հաստատութիւններին, որոնք կամենում են գրքերով և ուրիշատուութիւններով օգնել գրա- դարանին, բարեհաճին ուղարկել հետեւեւս հասցէով :
A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպպէի «Հայկական երգեցիկ խումբը» աւ շրջանին մէջ վերա- կաւ ըլլալով արդէն իր պա- րապուները, ձեռնարկած է նաև պարբերաբար հրատարա- կելու եւրոպական ձայնագրու- թեամբ հայկական հին և նոր քառաձայն երգեր, մաքուր թղ- թի վրայ, յատակ վիմագիր :

Այո առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը նորկայիւս կը յայտ նէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտաէր հայ երիտասարդու- թեան, որ եթէ աւ երգերէն փափագողներ կան, հաճին դի- մել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» հա- մար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ, Կոն երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղ- կանան :

Արտասահմանի համար 35 սնթ. Ֆիլիպպէ վարչ. «Հայկ. երգե- ցիկ խումբին» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philppople

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԻՐԺՈՒՄ»

Կը սպագրուին ամէն լեզուէ այցեւոմս, հասցեւոմս, համա- կազուիս, հարսանեկան հրաւի- րագիր, մահազգ :

Գիները յոյժ դիւրամտուչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդու- թեամբ և փութով կը կատար- ուին :

ՏԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒՆ

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ
(II)
ՎԵՍԵԼՕ

Կիրակէ երկու ժամը 9ին առա- ջին անգամ ըլլալով մեծաւ պատ- րաստութեամբ պիտի ներկայացուի ԶԻՆԱԿԱՆ ՄԵՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ

ԿՈՏՈՐԱԾ ԳՐԻՍՏՈՆԷԻՑ

Իրական աւելի թատերախաղ 4 ա- րար զանազան տեսարաններով

Զուեշտ և երգ մէկ արար ՀԱՄԼԷՒԵ փորձը կը շարունակուի Վէսէլօ խումբը վերջին անգամ քլլալով պիտի ներկայացնէ ըստ խնդրանաց հասարակութեան՝ «Լէպլէպիմի Հօրհօրը»

Ի նպատ 8. Թիւֆէնկեանի 15 յունվար երեքշաբթի գիշեր :

ОТГОВОРНИКЪ :
Мурадъ-Ераносянъ

Печ. Ваимность — Варна